

76. ԸԼԽՇԱՐՔԸԵՍ ՄԱՐԹԻՔՅՈՆ[1] ԸՆ ՇԱՏ, ԹԱ ԿՆԱՆԵՔՅԸ

Թաքավորն ըրազումը մին շատ ղնշենգյ ախճիգյ ա տրեսնում։ Սաղ ախշարքը շոռ ա կյամ, շատ քաշ-քաշ ինիլան եսը, վերջը, մին օր էտ ըխճըկանը քթենում, տրան Թա՝ ես էսհինչ երգյիրին Թաքավորն ըմ, օղում ըմ քըզնըհետ փսակվըեմ։ Էտ ախճիգյը Թա՝ ըռըշկիտ մին պայման ըմ տինում, վըեր կըրեցեր կըդարես, ես կյամ ըմ քեզ։ Թաքավորը Թա՝ ասե։ Ախճիգյը Թա՝ վըեր կըրեցեր ղուշու վրեսկուռա էրկու ըտրժանեն պալատ շինիս, կըկյամ քեզ։

Թաքավորը քյինամ ա ուրան երգյիրումը քանի ջուռա ղուշ կա, ամմըենան մին ներկայացուցիչ պիրիլ տամ, վըեր մալըհաթ անըեն, տրեսնան հի՞նչ ըն անում։

Ամմըեն ջուռա ղուշան մին ներկայացուցիչ ա կյամ, բեյղուշը կյամ չի։ Մին խիլլա վախտ անց կընալան եսը բեյղուշն էլ ա կյամ։ Թաքավորը տրան հըրցնում ա, Թա՝ խե յը՞ս յըտացալ, բեյղուշն ասում ա.—Ըրեռքես պեն ա իլալ, Թա չէ, ճեպի կըկյի։ Թաքավորը մտածում ա, ասում էս ղուշին էրկու հարց ըմ տըլական, Թա վըեր կարեց պատասխանըե, սրա ցեղեն պեց ըմ Թուղըլական, Թա չէ՛, չէ՛։ Թաքավորը բեյղուշին հըրցնում ա.—Ըխշարքես մըռըլնեն ը՞ն շատ, Թա՝ սաղըերը։ Բեյղուշը Թա՝ մըռըլնեն։ Թաքավորը Թա՝ խե՞։ Բեյղուշը Թա՝ մարդկուԹյունը վըեր ըստեղծվալ ա, մըեռնելն էլ նհետն ա ըստեղծվալ. հիշքան վըեր

[1] Ղամարդիք։

ծնվալ ըն, լոխ մրեռալ ըն, հիշքան վրեր ապրում ըն, տահանք էլ ըն լոխ մրոնբլական, հիշքան վրեր ծնվբլական ըն, նահանք էլ ըն լոխ մրոնբլական, տրա հետե յել մրեռած մարթիքյ շատ ըն, քանց սաղրերը։ Թաքավրերը մին հարց էլ ա տամ։ Հրրցնում ա, թա ըխշարքեն մարթիքյն ըն շա՞տ, թա՝ կնանեքյը։ Բեյղուշը թա՝ կնանեքյը։ Թաքավրերը թա՝ խե՞։ Բեյղուշը թա՝ կնանոցն անա կման մարթուցը մաշին հունցերը կան, վրեր կնգան խրելքավ ըն։ Թաքավրերը թա՝ էտ էլ ա գոնդ։ Տրանա հոը բեյղուշին ցեղը կտորում չի, պեց ա թողում։